ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2016 թվականի թիվ 34-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> թիվ 218-Ա որոշման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իմ ղեկավարությամբ ՀՀ Տավուշի մարզում 2016 թվականի ապրիլի 21-ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն) <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքների առաջացման դեպքում>> թեմայով:
2. Հաստատել.
   1) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը համաձայն հավելված 1-ի,
   2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը համաձայն հավելված 2-ի:
3. Ուսումնավարժությունում ներգրավել.
   1) ՀՀ Տավուշի մարզի արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովներին,
   2) ՀՀ Տավուշի մարզպետարանին,
   3) Այրում, Լճկաձոր և Արճիս համայնքների ղեկավարներին,
   4) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչությանը (այսուհետ ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ),
   5) ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը:

4. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Վ. Փիրումյանին.

1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի մշակումը և մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

2) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2016 թվականի ապրիլի 19-ը:

5. ՀՀ Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Լ. Սարգսյանին՝ ճշգրտել <<ՀՀ Տավուշի մարզի տարահանման պլան>>-ը:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին.

1) ուսումնասիրել <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը, <<Խոշոր քարաթափումների և սողանքների առաջացման դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործելու պլան>>-ը և արտակարգ իրավիճակների ոլորտին առընչվող իրավական ակտերը:

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2016թ. մարտի 15
Ք. Իջևան